

ՄԱՍ 2. ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ

Հաշվի առնելով Եռամյա ծրագրով սահմանված՝ վիճակագրության զարգացման առումով ռազմավարական ուղղությունները, հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ընդհանուր գործառույթային հետևյալ հիմնական միջոցառումները (աշխատանքները)։

2.1. ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում հրավիրվել է Խորհրդի 52 նիստ (այդ թվում՝ 2013 թվականին՝ 20, 2014 թվականին՝ 15 և 2015 թվականին՝ 17)։ Նիստերի ընթացքում քննարկվել է 245 հարց (այդ թվում՝ 2013 թվականին՝ 90, 2014 թվականին՝ 76 և 2015 թվականին՝ 79) և արդյունքում ընդունվել 318 որոշում (այդ թվում՝ 2013 թվականին՝ 106, 2014 թվականին՝ 138 և 2015 թվականին՝ 74), որից՝ 115 նորմատիվ (այդ թվում՝ 2013 թվականին՝ 37, 2014 թվականին՝ 50 և 2015 թվականին՝ 28) և 203 անհատական (այդ թվում՝ 2013 թվականին՝ 69, 2014 թվականին՝ 88 և 2015 թվականին՝ 46) որոշում։

1. «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների պահանջների կատարման, ինչպես նաև պետական վիճակագրության բնագավառը կարգավորող իրավահարաբերությունների հստակեցման ու կանոնակարգման նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են, մասնավորապես, հետևյալ միջոցառումները.

ա) ի կատարումն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 11-ի 7-րդ մասով սահմանված պահանջի, Խորհրդի 2013 թվականի ապրիլի 22-ի թիվ 11-Ա որոշմամբ հաստատվել և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության 2010-2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը»¹։ Հաշվետվությունն արտացոլում է «Հայաստանի Հանրապետության 2010-2012 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական վիճակագրական գործունեության հիմնական ուղղությունների իրագործման կատարողականը։

¹ Տես նաև՝ <http://www.armstat.am/am/?nid=453>

բ) ի կատարումն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5 և 6 մասերով սահմանված դրույթների, Ծառայության կողմից մշակվել և վիճակագրական տեղեկատվության թվով 55 սպառողների (այդ թվում՝ պետական մարմիններ, գիտակրթական հաստատություններ, հասարակական միություններ, զանգվածային լրատվամիջոցներ, միջազգային կազմակերպություններ և այլն) կարծիքին էր ներկայացվել «Հայաստանի Հանրապետության 2016-2018 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: Օրենքի նախագիծը միաժամանակ, զետեղվել էր Ծառայության պաշտոնական կայքէջում՝ արձագանքման խնդրանքով:

«Հայաստանի Հանրապետության 2016-2018 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը» ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

Օրենքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2015 թվականի դեկտեմբերի 15-ի նիստում²:

2. «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ամրագրված դրույթներին համապատասխանեցման նկատառումներից ելնելով, հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են նաև օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Մասնավորապես, միջազգային վիճակագրական ինտենսիվ համագործակցության պայմաններում Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական լիազոր մարմնի ներկայացուցչի ներկայացուցչականության ավելի բարձր աստիճան ապահովելու նպատակով, 2013 թվականի սեպտեմբերի 30-ին փոփոխություն է կատարվել «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:

3. Շարունակվել են վիճակագրության բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական դաշտի կատարելագործման, ամբողջականացման, ինչպես նաև արդեն իսկ ընդունված ու կիրառվող իրավական ակտերի՝ օրենսդրության մեջ տեղի ունեցած փոփոխություններին համապատասխանեցման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Ընդհանուր առմամբ, հարկ է փաստել, որ վիճակագրության բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական դաշտն արդեն իսկ ձևավորված է, և աշխատանքներն ուղղորդված են դրանց կատարելագործմանը: Այդ նպատակով Խորհրդի կողմից հաշվետու ժամանակաշրջանում ընդունվել են 115 նորմատիվ որոշումներ, որից՝ 2013 թվականին՝ 37, 2014 թվականին՝ 50 և 2015 թվականին՝ 28 որոշում:

² Հայաստանի Հանրապետության Պաշտոնական Տեղեկագիր՝ 2015.12.30/91(1180)

Խորհրդի բոլոր նորմատիվ որոշումները՝ որպես գերատեսչական նորմատիվ ակտ, գրանցվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում:

4. Հաշվետու ժամանակաշրջանում Խորհրդի կողմից ընդունվել են 203 անհատական (այդ թվում՝ 2013 թվականին՝ 69, 2014 թվականին՝ 88 և 2015 թվականին՝ 46) որոշում: Խորհրդի անհատական որոշումներով հաստատվել են պետական վիճակագրական փաստաթղթերը, որոնցից 23-ը՝ փորձնական գյուղատնտեսական հաշվառման վերաբերյալ: Անհատական մյուս որոշումներով կարգավորվել են տարաբնույթ հարցեր, որոնք մասնավորապես վերաբերում են վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերին հավանություն տալուն, վարչական ռեգիստրներից վիճակագրական տեղեկատվության ստացման նպատակով պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևերի, հետազոտությունների հարցաթերթերի, դասակարգիչների հաստատմանը, Ծառայության աշխատակազմի հաշվեկշռի, գույքի կազմի հաստատմանը, միջազգային վիճակագրական համագործակությանը և այլ ընթացիկ աշխատանքային հարցերի:

5. Հաշվի առնելով «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի, ինչպես նաև Խորհրդի 2002 թվականի մայիսի 10-ի «Վարչական (տեղեկատվական) ռեգիստրների վարման և դրանցից տեղեկատվության ստացման կարգը հաստատելու մասին» թիվ 109 որոշմամբ հաստատված կարգի դրույթները, հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խորհուրդն անհատական որոշումներով հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների կողմից հավաքագրվող թվով 25 վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերի և դրանց լրացման հրահանգների, որից 2013 թվականին՝ 11, 2014 թվականին՝ 6 և 2015 թվականին՝ 8: Դրանցից թվով 14-ը վերաբերում են առողջապահության ոլորտին, 1-ը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին, 6-ը՝ էներգետիկայի և բնական պաշարների ոլորտին, 3-ը՝ գյուղատնտեսության ոլորտին և 1-ը կրթության և գիտության ոլորտին:

Վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերին հավանություն տալուց զատ, վարչական ռեգիստրներից վիճակագրական տեղեկությունների ստացման նպատակով, Խորհրդի կողմից հաստատվել և կիրառության մեջ են դրվել պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության թվով 18 ձևեր, որոնցից 2013 թվականին՝ 2, 2014 թվականին՝ 8 և 2015 թվականին՝ 8 ձև: Մասնավորապես, պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևերը ստացվել են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունից՝ 1 ձև, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունից՝ 5, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից՝ 4, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունից՝ 4, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունից՝ 2, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայությունից՝ 2:

2.2. ՄԵԹԱՏՎՅԱԼՆԵՐ

Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրական վարչությունը տարբեր երկրների վիճակագրական տեղեկատվության որակի, թափանցիկության, տվյալների համադրելիության ապահովման, միջազգային հանրությանը դրանց օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռնման, կիրառվող մեթոդաբանության և դրա հետագա զարգացման ծրագրերին տեղեկացնելու նպատակով, հիմնել է Տվյալների տարածման ընդհանուր համակարգ՝ ՏՏԸՀ (1997 թվականի դեկտեմբեր) և Տվյալների տարածման հատուկ ստանդարտ՝ ՏՏՀՍ (1996 թվականի մարտ): Թվարկվածներից ՏՏԸՀ-ին Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է դեռևս 2001 թվականի մարտի 29-ին:

Ծառայության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ու Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասնագետների կողմից իրականացված համատեղ աշխատանքների արդյունքում, 2003 թվականի նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց ՏՏՀՍ-ին (դառնալով այդ ստանդարտին անդամագրվող 54-րդ երկիրը), կատարելով կարևոր քայլ՝ ուղղված երկրի վիճակագրական համակարգի համապատասխանեցմանը վիճակագրության ոլորտում միջազգային կարևոր ստանդարտներից մեկին:

ՏՏՀՍ-ն պարունակում է մշտական պահպանման խիստ պահանջներ, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակայնորեն առկա է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Ստանդարտների տարածման տեղեկագրում՝ <http://dsbb.imf.org/Default.aspx>: Ստանդարտների տարածման տեղեկագիրը ներկայումս ներառում է համապարփակ փաստաթղթեր (մեթատվյալներ, ինչպես նաև դրանց համառոտ մեթոդաբանությունը) անգլերենով ՏՏՀՍ-ի տվյալների կատեգորիաների մասով Հայաստանի Հանրապետության վիճակագրական փորձառության վերաբերյալ, որը վկայակոչում է Ծառայության կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում ներառված երկրի արդիական տվյալները՝ <http://docs.armstat.am/nsdp/>:

Ծառայության պաշտոնական կայքէջի «Դասակարգիչներ և մեթոդաբանություն» հատվածի «Մեթատվյալներ» ենթահատվածում զետեղված են նաև մեթատվյալների հայերեն և ռուսերեն տարբերակները:

ՏՏՀՍ-ն ներառում է 22 խումբ ցուցանիշներ, որոնք ընդգրկված են իրական, դրամավարկային, ֆինանսական, արտաքին և սոցիալ-ժողովրդագրական հատվածներում: Այդ ցուցանիշների արդիականացումն իրականացվում է ամսական և եռամսյակային, իսկ մեթատվյալների և դրանց համառոտ մեթոդաբանության արդիականացումը՝ առնվազն տարեկան կտրվածքով: Տվյալների արդիականացման ժամկետները ներկայացված են Ծառայության կողմից վարվող նախապես տարածման օրացույցի էջում՝ <http://docs.armstat.am/nsdp/arc/>:

2009 թվականի փետրվարի 10-ին ԱՄՀ-ի պաշտոնական կայքէջում (<http://www.imf.org/external/NP/rosc/rosc.aspx>) զետեղվել է Հայաստանի վերաբերյալ ԱՄՀ-ի Ստանդարտների և կոդերի պահպանման զեկույցը, որը ներառում է տվյալների որակի գնահատման ձևաչափի օգտագործմամբ մանրամասն գնահատումը:

Որակի հոչակագրեր

Որակի հոչակագիրը նկարագրում է վիճակագրության օրենսդրական հիմքերը, վիճակագրության նպատակը և մեթոդաբանությունը, դրա տարածումը և վիճակագրության սպառողների և նրանց մոտ առաջացող հարցերի փարատման համար այլ կարևոր տեղեկատվություն:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի միջոցով» ծրագրի շրջանակում մշակված Ծառայության յուրաքանչյուր վիճակագրական արտադրանքի համար (վիճակագրական 17 բնագավառների ներքո առկա է 136 արտադրանք՝ հայերեն և անգլերեն) որակի հոչակագրերի արդիականացման աշխատանքները:

2.3. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻՉՆԵՐ ԵՎ ԲԻՉՆԵՍ ՌԵԳԻՍՏՐ

Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման և կողավորման միասնական համակարգի ստեղծման անհրաժեշտությամբ պայմանավորված, հաշվետու ժամանակահատվածում Ծառայության կողմից շարունակվել են համապատասխան դասակարգիչների մշակման, գրանցման և ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

1. Եվրոպական Համայնքների Վիճակագրական ծառայության կողմից հաստատված «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի» 2-րդ խմբագրության (S9S<7 խմբ.2) հիման վրա 5-րդ՝ ազգային նիշի մակարդակով մշակված համանուն դասակարգչի ուղղությամբ 2013-2015 թվականներին իրականացվել են ներդրման կազմակերպական միջոցառումներ՝ մասնավորապես Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում:

2. Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Վիճակագրական հանձնաժողովի կողմից «Արտադրանքի դասակարգումն ըստ տնտեսական գործունեության տեսակների» դասակարգչի 2008 թվականի վերանայված տարբերակի հիման վրա ստեղծվել և Խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 44-Ա որոշմամբ հավանության է արժանացել «Արդյունաբերական արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների (9-նիշ մակարդակով) դասակարգիչը», ինչը նախադրյալներ է ստեղծում արդյունաբերության ոլորտի տեխնիկատնտեսական տեղեկատվության կողավորման միասնական ու արդեն իսկ ավարտուն և ամբողջական՝ «գործունեության տեսակ - արտադրանք» դասակարգչային գործիքակազմի ներդրման համար:

3. Միավորված ազգերի կազմակերպության Վիճակագրական հանձնաժողովի կողմից վերանայված «Անհատական սպառման դասակարգիչ ըստ նպատակների» դասակարգչի հիման վրա մշակվել, 2014 թվականի հունիսի 2-ի Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի թիվ 513-Ն հրամանով հաստատվել և 2014 թվականի հունիսի 16-ին Հայաստանի

Հանրապետության արդարադատության նախարարությունում գրանցվել է «Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչը», որը կոչված է տնային տեսությունների վերջնական ծախսերը դասակարգելուն:

4. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից մշակված համանուն դասակարգչի հիման վրա մշակվել և 2015 թվականի դեկտեմբերի 7-ի Խորհրդի թիվ 38-Ա որոշմամբ հավանության է արժանացել «Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգիչը», որը նախատեսված է կողավորելու Հայաստանի Հանրապետության տնտեսության ինստիտուցիոնալ միավորներն իրենց գործառնական նշանակությամբ՝ ըստ տնտեսության հատվածների և ենթահատվածների:

5. Եռամյա ծրագրով նախատեսված վարչական ռեգիստր հանդիսացող պետական կառավարման մարմիններից (Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից) ստացվել են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տվյալներ: 2015 թվականին Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից 2014 թվականի ընթացքում գործունեություն իրականացրած շուրջ 19 000 իրավաբանական անձանց և 38 000 անհատ ձեռնարկատերերի տնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ ստացված տեղեկատվությունն օգտագործվել է բիզնես ռեգիստրի տվյալների ամբողջականացման և արդիականացման նպատակով:

6. Բիզնես ռեգիստրի ձևավորման և արդիականացման նպատակով Ծառայության աշխատակազմի մարզային գործակալություններից, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումներից ստացվել, համադրվել և ամփոփվել է վիճակագրական մշտադիտարկումներում առկա իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տեղեկատվությունը: Արդյունքում իրականացվել է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի տնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության (գտնվելու վայրի, գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, աշխատողների թվաքանակի, ինչպես նաև գործելու կամ չգործելու վերաբերյալ տվյալներ) արդիականացումը՝ 2013 թվականին շուրջ 16 200 իրավաբանական անձանց և 11 000 անհատ ձեռնարկատերերի, 2014 թվականին 16 300 իրավաբանական անձանց և 12 500 անհատ ձեռնարկատերերի և 2015 թվականին 16 300 իրավաբանական անձանց և 13 000 անհատ ձեռնարկատերերի:

7. Բիզնես ռեգիստրի տվյալների արդիականացված բազան օգտագործվել է Ծառայության կողմից համատարած և ընտրանքային հետազոտությունների անցկացման համար: